ԱՐՇԱԿ ՓՈԼԱԴՅԱՆ

ՀԱՍԱՆՎԱՅՀՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՆ ԵՎ ՆՐԱ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒԻՆԵՐԻ ՀԵՏ (X-XI դ.)

IX-X դդ. Աբբասյան խալիֆայության հպատակ երկրներում ավատատիրական հարաբերությունների արագ զարգացումը և կենտրոնական իշխանության աստիճանական քայքայումը մեծապես խթանեցին խոշոր ազնվականության անջատողական տրամադրությունների աճը: Աբբասյան խալիֆայությունում հատկապես իրանական տարրի ակտիվացումը և ստեղծված քաղաքական բարդ իրավիճակը նոր թափ հաղորդեցին նաև քրդական ցեղերի ռազմաքաղաքական գործողություններին: Եթե մինչ այդ քրդերի անկազմակերպ և տարերային ընդվզումները հիմնականում ներշնչված էին տնտեսական կապանքներից այս կամ այն չափով ազատվելու ձգտումներով, ուղղված էին արաբական գերիշխանության դեմ, ապա X դարից նրանց պայքարը ստանում է նոր որակ: Այլ կերպ ասած, օգտվելով խալիֆայությունում և տարածաշրջանում ստեղծված նպաստավոր պայմաններից, քրդական վերնախավը, ցեղակիցներին իր շուրջը համախմբելով, դուրս եկավ քաղաքական ասպարեզ, վարձեր կատարեց առանձին շրջաններում ինքնուրույնություն ձեռք բերել և ընդլայնել իր ազդեցության ոլորտները:[1]

Այսպիսով, կենտրոնական իշխանության թուլացման հետևանքով X դարից խալիֆայության տարբեր վայրերում և հանգամանքների բերումով, մահմեդական դինաստիաների գլխավորությամբ պատմության թատերաբեմ դուրս եկան նաև մի շարք քրդական իշխանություններ, որոնք, ըստ էության, ավատատիրական հասարակությանը բնորոշ ժամանակավոր կազմավորումներ էին: Այդպիսի կազմավորումներից էր Հասանվայիների իշխանությունը Ջիբալում՝ (Արևելյան կամ իրանական Քարդիսաանում, X-XI), որի հիմնադիրն էր քրդական ալ-Քարզինիյա կամ ալ-Քարզիկան ցեղի առաջնորդ Հասանվայի իբն Հուսեյն ալ-Քուրդին (մահ. 979թ.), և որն էլ այն հայտնի է պատմությանը (Հասանվայիների կամ Հասնավայիների):

Հասանվայիների դինաստիան, որը հիշյալ տարածքում գոյատևեց ավելի քան կես դար (961-1015թթ.), սերտ հարաբերություններ ունեցավ, ամենից

առաջ, իրանական դելմիկ Բուիների[3] իշխանության հետ, որը, ինչպես հայտնի է, բավականաչափ ազդեցիկ դեր խաղաց ոչ միայն քրդական այս դինաստիայի, այլև՝ Աբբասյան խալիֆայության քաղաքական կյանքում: Ուստի անկարելի է խոսել Հասանվայհների մասին՝ շրջանցելով նրանց և Բուիների ռազմաքաղաքական վախհարաբերությունները, որովհետև ի վերջո մենք գործ ունենք մի տարածքի և ժամանակահատվածի հետ, որում գործեցին երկու կողմերը: Դա Աբբասյան խալիֆայության համար խիստ բարդ մի ժամանակաշրջան էր, ուր քրդական և դայլամական խմբավորումները իրենց ակտիվ գործունեություններով նոր թափ հաղորդեցին արևելամահմեդական աշխարհի, հատկապես իրանական այլ տարրերի հակակատատիրական պայքարին և կենտրոնախույս ուժերի ելույթներին[4]:

Հասանվայհների դինաստիայի և Բուիների հետ նրա ունեցած փոխհարաբերությունների պատմությունը մինչև օրս լուրջ ուսումնասիրության առարկա չի դարձել արևելագետների կողմից: Ելնելով իրենց աշխատությունների բնույթից՝ եվրոպացի հետազոտողները մեզ հետաքրքրող հիմնահարցերը կամ առհասարակ չեն լուսաբանել (Ստենլի Լեն-Պուլ, Է. Ցամբաուեր)[5], կամ էլ դրանց անդրադարձել են մասնակիորեն (Կ. Կահեն, Վ. Սինորսկի)[6]:

Խնդրո առարկա թեման քիչ թե շատ լուսաբանել են պատմաբաններ Մուհամմադ Ամին Զաքին[7] և Զալիլա Նաջի ալ-Հաշիմին[8], սակայն անհրաժեշտ չավտով նրանք չեն օգտագործել սկզբնաղբյուրների նյութերը, պատմական լայն կտավի վրա չեն դիտարկել Հասանվայհների երևան գալու դրդապատճառները, գործունեությունը, բուի իշխանների հետ ունեցած հարաբերությունները և այլ կարևոր մի խումբ հարցեր:

Հասանվայհների դինաստիայի ռազմաքաղաքական և հարևան մահմեդական ամիրայությունների հետ հարաբերությունների պատմության զանազան հիմնախնդիրները լուսաբանելու համար եզակի և փաստական արժեքավոր տվյալներ են պարունակում ամենահիմնական սկզբնաղբյուրները՝ արաբալեզու մատենագիրների երկերը, որոնք էլ հանդիսանում են ներկա ուսումնասիրության հիմքը:

Զիբալում և հարակից շրջաններում քրդական միջցեղային հակասությունների, կռիվների, ընդվզումների, ինչպես նաև Հասանվայհների գործունեության վերաբերյալ հույժ հետաքրքրական նյութեր են հաղորդում մասնավորապես Իբն Սիսքավայհը[9] (X-XIդդ.), Աբու Շուջա՝ ստ-Ռուզրավարին[10] (XIդ.), Իբն ալ-Ջաուզին[11] (XIIդ), Իբն ալ-Ասիրը[12] (XIIIդ), Իբն Խալդունը[13] (XIVդ), Իբն Քասիրը[14] (XIVդ) և ուրիշներ:

Նախ մի քանի խոսք Հասանվայհների դինաստիայի ձևավորման մասին: Պետք է ասել, որ նրա հիմնադրման որոշակի տարեթիվը հայտնի չէ: Մեզ հասած աղբյուրները Հասանվայհ իբն Հուսեյն ալ-Քուրդին առաջին անգամ հիշատակում են հիջրի 359 (969/70)թ. դեպքերը նկարագրելիս[15]: Շարաֆ խան Բիդլիսին նշում է, որ իշխանության հիմնադիր Հասանվայհը, պատմիչների մեծամասնության կարծիքով, եղել է Բուի իշխան «Ռուքն ադ-

Դաուլայի ժամանակակիցը»[16], այսինքն՝ այն նույն Բուի Հասանի, որը 935 թ. գրավեց Ջիբալը:

Պատմագրությանը հայտնի է, որ Հասանվայհի քեռորդիները՝ Վինդադն ու Դանիմը խոշոր ավատատերեր էին Ջիբալում: Վինդադը վախճանվեց հիջ. 349 (960/1)թ., իսկ Դանիմը՝ հիջ. 350(961/2)թ.: Վերջիններս շուրջ հիսուն տարի, համաձայն ստկա հաղորդումների, տիրեցին Համադանի, Դինավարի, Նեհավանդի, Սամաղանի, Ատրպատականի որոշ շրջաններին՝ ընդհուպ մինչև Շահրեզուրի սահմանները: Նրանցից յուրաքանչյուրն իր տրամադրության տակ ուներ մի քանի հազարանոց բանակ: Վինդադի և Դանիմի մահից հետո, քրդական Շադինջան ցեղի օգնությամբ, Հասանվայհ իբն Հուսեյն ալ-Քուրդին գրավեց նրանց բոլոր «ամրոցներն ու տիրույթները»[17]: Դրանով, փաստորեն, քրդական ալ-Այշանիյա ցեղի զբաղեցրած տարածքի վրա երևան եկավ Հասանվայհների դինաստիան: Կարգավորելով իշխանության ներքին կյանքը, ինչպես նշում են արաբ մատենագիրները, Հասանվայհը ամենից առաջ «նրբագեղ քարերով կառուցեց Սարմաջ բերդը[18] և Դինավարում նույն շինարարական ոճով մի մզկիթ»[19]: Այս ամենը հիմք է ծառայում եզրակացնելու, որ Հասանվայհների իշխանության հիմնադրումը կարելի է համարել հենց 961/2 թ.[20]: Իշխանության մայրաքաղաք հռչակվեց Դինավարը:

Նրա իշխանությունը տարածվեց Ջիբալի հիմնական քաղաքների՝ Համադանի, Դինավարի, Նեհավանդի և այլ շրջանների վրա, որի գոյության հետ հաշտվեց ոչ միայն Բաղդադի արքունիքը[21], այլև Բուիները: Այնուամենայնիվ, Արևմտյան Իրանում և հարակից շրջաններում քիչ թե շատ ինքնուրույնություն ձեռք բերած Հասանվայհ քրդերը սկզբից ևեթ երկյուղ էին կրում այդ տարածքները ներխուժած Բուիներից: Չնայած երկու կողմերի գործունեությունն այս կամ այն չափով նաև հակաարաբական բնույթ ուներ, սակայն տարածքային հարցերում նրանց շահերը բախվում էին, և Ջիբալում ուժերի գերակշռությունը, թերևս, ձեռնտու չէր նրանցից ոչ մեկին: Սակայն, դատելով մեր ձեռքի տակ եղած նյութերից, Ջիբալում Հասանվայհների առկայությունը և ակտիվացումը որոշ իմաստով Բուիներին, կարծես թե, այնքան էլ չէր խանգարում: Ընդհակառակը, ռազմական օգնություն ստանալու վախարեն, ինչպես երևում է, Բուիները երկար ժամանակ սիրաշահում էին Հասանվայհին և, բավարարվելով Ջիբալի նվաճման ձևական ենթակայությամբ, խրախուսում էին տվյալ տարածքներում կարգուկանոն հաստատելու նրա միջոցառումները:

Իբն Սիսքավայհի, Իբն ալ-Ասիրի, Իբն Խալդունի և այլոց նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ Հասանվայհը ռազմական մեծ օգնություն էր ցույց տալիս Բուի Ռուքն ադ-Դաուլային (935-977թթ.)՝ Խորասանի Սամանյանների դեմ մղած մարտերում[22]: Դայլամական զորքերին զինաջակցության համար էլ նա արժանացավ Բուի իշխանի՝ Ռուքն ադ-Դաուլայի լիակատար հովանավորությանն ու բարյացակամ վերաբերմունքին[23]: Օգտվելով վերջինիս թողտվությունից և վստահությունից՝ Հասանվայհը գնալով ի-

բեն ավելի անկախ էր զգում և համարձակ իշխանություն էր գործադրում: Նա նույնիսկ սկսեց հարկեր գանձել Ջիբալով անցնող քարավաններից և տեղի ավատատերերից[24]: Այս առթիվ Իբն ալ-Ասիրը գրում է, որ այդ մասին լուրերը հաղորդվում էին Ռուքն ադ-Դաուլային, սակայն նա լռում էր, և չէր միջամտում նրա գործերին, քանի որ ինքը շատ ավելի կարևոր գործերով էր զբաղված[25]: Այս ամենի շնորհիվ Հասանվայհին հաջողվում է ոչ միայն լինել Ջիբալի լիիրավ իշխանը, այլև՝ ընդարձակել իր տիրապետության շրջանակները[26]: Օր-օրի, ինչպես նշում է դեպքերի ժամանակակից Իբն Միսքավայհը, նրա իշխանությունը հզորանում էր, որից հեռանում էին տեղական կառավարիչները[27]: Այնուամենայնիվ, վրա հասավ պահը վերջապես ընդհարվելու իր հովանավորողի՝ Ռուքն ադ-Դաուլայի հետ: Հիջրի 359 (969)թ. Հասանվայհի և Համադանի կառավարիչ Սահլան իբն Մուսաֆիրի միջև ծագած վեճը սուր բնույթ կրեց: Ռազմական ընդհարման ընթացքում Հասանվայհը ջախջախեց նրան, ապա՝ փախուստի մատնվածներին երկար ժամանակ պաշարեց, այնուհետև, ինչպես գրում են արաբ հեղինակները, գցեց կրակի օղակի մեջ: Ամռան շոգն ու կրակը ստիպեցին հակառակորդին անվտանգություն խնդրել Հասանվայհից[28]: Քուրդ իշխանի այս ոտնձգությունն ու վայրագ վերաբերմունքը դայլամիների նկատմամբ սաստիկ զայրացրեց և անհանգստացրեց Ռուքն ադ-Դաուլային: Բուի իշխանը նույն թվականի մուհուռամ ամսին (969թ. նոյեմբեր ամսին) հրամայեց իր վեզիրին՝ Իբն ալ-Ամիդին մեծ զորքով Ռեյից շարժվել և հակահարված տալ Հասանվայհին[29]: Համադանի մոտ հիվանդ վեզիրը վախճանվեց, և նրան վախարինեց որդին՝ երիտասարդ Աբու-լ-Ֆաթհը: Վերջինս բանակցություններ վարեց Հասանվայհի հետ և առանց ճակատամարտ տալու ստիպեց նրան հնազանդվել և հաշտության պայմանագիր կնքել[30]: Տեսնելով պարտության անխուսափելիությունը, ինչպես նշում է Շարաֆ Խան Բիդլիսին, Հասանվայհը հարկադրված եղավ դիմելու միջնորդների օգնությանը[31]: Հաշտության պայմանագրով Հասանվայհը Բուիներին վճարեց շուրջ 100 հզ դինար[32]: Իբն Միսքավայհի շարադրանքից պարզ երևում է, որ Բուի զորահրամանատարն իր հերթին ևս այնքան էլ մտադիր չէր ընդհարվելու Հասանվայհի հետ: Այդ քայլին դիմելու դրդապատճառներից մեկն էլ այն էր, որ նա անհապաղ պետք է շտապեր Ռեյ և զբաղեցներ իր հոր՝ վեզիրի պաշտոնը, քանի դեռ այն թավուր էր[33]:

Այսպիսով, վերը նշված փաստերը վկայում են, որ հաշտությունը ձեռնտու էր թե՛ Հասանվայհին և թե՛ Աբու-լ-Ֆաթհին, թեև քուրդ իշխանի վրա դա ավելի ծանր նստեց: Նա բարիդրացիական հարաբերություններ շարունակեց Ռուքն ադ-Դաուլայի հետ, որի օրոք էլ նրա իշխանությունը ծաղկում ապրեց[34]: Այս դեպքերից հետո, դատելով աղբյուրների լռությունից, պետք է ենթադրել, որ Հասանվայհների և Բուիների փոխհարաբերությունները շարունակվեցին նախկին հունով: Մի քանի տարի անց վիճակը համարյա լիովին վախվեց. Հասանվայհին հովանավորող հիվանդ և ծեր Ռուքն ադ-Դաուլայի կյանքի վերջին շրջանում գահի համար Բուիների միջև խիստ տարա-

ձայնություններ առաջացան: Նրա մահից առաջ պետք է որոշվեր դինաստիայի գերագույն իշխանության հավակնորդի թեկնածությունը: Այդ իրավունքը տրվեց Ռուքն ադ-Դաուլայի որդիներից մեկին՝ Բուիներից թերևս ամենագործոն Ադուդ ադ-Դաուլային (949-983թթ) [36], որը բուիական միացյալ և կենտրոնացված իշխանություն ստեղծելու լուրջ մտադրություններ էր դրսևորում[36]:

Տվյալ ծրագրի իրականացման ճանապարհին Բուի իշխանը հանդիպեց մեծ դժվարությունների: Ամենից առաջ նա պետք է հակահարված տար թշնամական դիրք բռնած իր եղբայրներին, հորեղբոր որդիներին և նրանց հարող ընդդիմադիր տեղարբնիկ ուժերին: Անշուշտ, Ադուդ ադ-Դաուլայի տեսադաշտից դուրս չէր կարող մնալ նաև Ջիբալի Հասանվայհների իշխանությունը, մանավանդ որ Հասանվայհը, թեկուզ ձևականորեն, դեռևս 975 թ. Ռուքն ադ-Դաուլայի կենդանության օրոք, հակված էր Իռաքի՝ նրա գլխավոր հակառակորդի, հորեղբոր որդու՝ Բախտիյարի կողմը[37]:

Կռահելով Ադուդ ադ-Դաուլայի մտադրությունը և տարբեր ճակատներում նրա ռազմական հաջողությունները՝ Հասանվայհը փորձեց կապեր հաստատել Բախտիյարի հետ: Ստեղծված լարված ու վտանգավոր իրադրությունը ստիպեց նրան դիմելու նման քայլի, քանի որ տվյալ ժամանակ Բախտիյարը միակ հուսալի ուժն էր՝ ընդդեմ Ադուդ ադ-Դաուլայի: Բախտիյարին խաբելով և Ադուդ ադ-Դաուլայի դեմ՝ նրան շարունակ օժանդակելու խոստումներ տալով, Հասանվայհը[38] միաժամանակ նման գործարքների մեջ էր մտել Բուի մյուս իշխանների հետ: Ակտիվ դեր խաղալով բուն Բուիների միջև ծագած հակասությունները խորացնելու գործում՝ Հասանվայհը ջանում էր ձախողել բուիական միացյալ իշխանության ստեղծման ծրագիրը: Իբն Միսքավայհը, դիպուկ նկատելով այդ ամենը, գրում է. «Հասանվայհը սիրում էր խախտել միաբանությունը և պառակտել միասնությունը, քանզի նրա իշխանությունը գտնվում էր այս իշխանների (այսինքն՝ բուիների- Ա.Փ.) տիրապետության շրջանակներում»[39]:

Բախտիյարին և նրա կողմնակիցներին ջախջախելու համար հիջ. 336 (976/7)թ. Ադուդ ադ-Դաուլան Ֆարսից շարժվեց Իրաք: Բախտիյարին աջակցելու նպատակով, Հասանվայհը՝ Վասիտ (Իրաք) ուղարկեց մեկ հազարանոց բանակ իր երկու որդիների՝ Աբդ առ-Ռազակի և Բադրի գլխավորությամբ[40]: Չմասնակցելով մարտական գործողություններին՝ նույն թվականին հետ վերադարձավ Աբդ ստ-Ռազակը: Իսկ 977/8թ., երբ Բախտիյարը մտադրվեց ճանաչել Ադուդ ադ-Դաուլայի գերիշխանությունը, Ջիբալ մեկնեց նաև Բադրը[41]:

Արաբական Իրաքում և հարակից այլնայլ շրջաններում ակտիվ ռազմական գործողություններ ծավալելուց հետո, հիջրի 369 (979/ 80)թ. Ադուդ ադ-Դաուլան ծրագրեց հերթական արշավանքը դեպի Ջիբալ: Դրանով նա ձգտում էր նվաճել Հասանվայհի տիրույթները և ջախջախել իր եղբորը՝ Ֆախր ադ-Դաուլային, որը դաշինք էր կնքել Բախտիյարի հետ[42]: Սինչ նա նախապատրաստվում էր, նույն թվականին Սարմաջ բերդում մեռավ քուրդ

իշխան Հասանվայհը և Ջիբալ ներխուժելու համար ստեղծվեց ամենանպաստավոր պահը:

Հասանվայհի մահը բավական ոգևորեց Աղուդ ադ-Դաուլային, որը, Իբն Միսքավայհի խոսքերով, գտնում էր, թե ասպարեզից «վերացավ այն սատանան, որը թշնամանք էր սերմանել իր և եղբայրների միջև»[43]: Պատմիչի ուշագրավ այս հաղորդումը վկայում է Բուիների հետ Հասանվայհի դիվանագիտական խաղերի և իր իշխանությունը պահպանելու ուղղությամբ նրա գործադրած ջանքերի մասին: Հասանվայհի մահից հետո սուր վեճեր առաջացան նրա յոթ որդիների միջև[44]: Նրանցից ոմանք հակվեցին Աղուդ ադ-Դաուլայի, իսկ մի քանիսը՝ նրա եղբոր Ֆախր ադ-Դաուլայի կողմը[45]: Օգտվելով առիթից՝ Աղուդ ադ-Դաուլան մեծաքանակ զորքով Բաղդադից շարժվեց Ջիբալ՝ վիճակը կարգավորելու նպատակով: Համարյա առանց դիմադրության նրան հանձնվեց Համադանը, իսկ Ֆախր ադ-Դաուլայի շատ զորավարներ և Հասանվայհի կողմնակիցներն անվտանգություն խնդրեցին Աղուդ ադ-Դաուլայից: Գրավելով Համադանը, Ռեյը և այլ շրջաններ՝ նա ասպատակեց նաև Նեհավանդը, Դինավարը և Սարմաջ բերդը, ուր գտնվում էր քուրդ իշխանի որդիներից միայն Բախտիյարը[46]: Նվաճելով Հասանվայհի մի քանի բերդեր՝ Աղուդ ադ-Դաուլան թալանից Սարմաջում նրա ունեցած մեծաքանակ հարստությունը և քրդերի իշխան նշանակեց նրա տղաներից ամենագործունյա Բադր իբն Հասանվայհին[47]: Այս առթիվ Իբն ալ-Ջաուզին գրում է, որ Աղուդ ադ-Դաուլան Բադրին տրամադրեց «Ջիբալի իշխանությունը՝ Համադանը, Դինավարը, Բորոջիրդը, Նեհավանդը, Ասադաբադը և այլ վայրեր»[48]:

Իբն ալ-Ասիրը նշում է, որ «Բադրի տիրապետությանն էին ենթարկվում Սաբուրխվաստը, Դինավարը, Բորոջիրդը, Նեհավանդը, Ասադաբադը, մի հատված Ահվազի շրջանից և դրանց միջև ընկած բերդերն ու տիրույթները»[49]: Նման վկայություն հաղորդում է նաև Շարաֆ Խան Բիդլիսին գրելով, որ «Բադրին ենթարկվում էին բոլոր ամրոցները, լեռները և դաշտավայրերը՝ Դինավարից մինչև Ահվազ, Խուզիստան, Բորոջիրդ, Ասադաբադ և Նիհավանդ»[50]: Այս առթիվ պետք է ասել, որ վերը նշված հեղինակների նկարագրած տարածքները Բադրին ենթարկվեցին ոչ թե սկզբից, այլ ավելի ուշ, երբ մահացավ Աղուդ ադ-Դաուլան: Վերջինս, ինչպես վկայում են մեր ձեռքի տակ եղած նյութերը, Բադրին ինքնավար իշխանություն տվեց միայն քրդական շրջանում և զորք տրամադրեց տվյալ տարածքներում կարգուկանոն հաստատելու, ինչպես նաև քրդական ցեղերի ներքին հակասություններին վերջ տալու համար[51]: Վասալական իրավունքով հորը վախաբինած Բադրի (979-1015թթ.) դեմ հիջրի 370 (980/1)թ., քրդերի օգնությամբ, սկսեցին դավեր նյութել մյուս եղբայրները: Աղուդ ադ-Դաուլան ձերբակալեց Հասանվայհի տղաներին և մահվան դատապարտեց բոլորին[52]:

Այսպիսով, Բուի իշխան Աղուդ ադ-Դաուլայի աջակցությամբ Բադրին հաջողվեց առանց դժվարությունների, Դինավար կենտրոնով, տիրել Ջիբալի

շրջաններին: Այդ ամենի համար էլ Բաղդը մինչև վերջ երախտապարտ մնաց Աղուդ ադ-Դաուլային, որը, ինչպես իրավացիորեն նշում են Իբն Քասիրն ու Իբն ալ-Ջաուզին, հնարավոր դարձրեց նրա՝ իշխանության գլուխ անցները[53]: Ուստիև, պատահական չէ, որ Բաղդն իր մոր և Աղուդ ադ-Դաուլայի համար զոհաբերություններ էր կատարում՝ ուխտագնացության էր ուղարկում տարեկան քսան մարդ՝ այդ նպատակին տրամադրելով հազար դինար[54]:

983թ. Աղուդ ադ-Դաուլայի մահից հետո, Բուիների միջև ծագած խոր հակասությունների հետևանքով, սկիզբ առավ նրանց իշխանության աստիճանական քայքայումը[55]: Այդ ամենը հնարավորություն տվեց նաև Բաղդին որոշ չափով ավելի ազատ գործելու Ջիբալում և հարակից շրջաններում: Եթե մինչ այդ խիստ սահմանափակ էր նրա իշխանությունը, ապա այժմ ստեղծվեցին բոլոր պայմաններն ընդարձակելու իր տիրապետության շրջանակները: Դրա հետ միասին նա ի վիճակի չեղավ, և հնարավոր էլ չէր, խզելու իր հարաբերությունները Բուիների հետ: Աղադ ադ-Դաուլայի մահից հետո Բաղդն սկսեց հարել նրա եղբորը՝ Ֆախր ադ-Դաուլային, որը Մուայիդ ադ-Դաուլայի մահից հետո, Խորասանից վերադարձավ Իսֆահան և Ռեյ[56]: Երբ հիջրի 373 (983/4)թ. Ղումի Քարդար շրջանում ապստամբեց քուրդ Բարգիկան ցեղի ներկայացուցիչ Մահմուդ իբն Ղանիմ ալ-Բարգիկանին և ամրացավ Հաֆթջան ամրոցում, Ֆախր ադ-Դաուլան, անհաջող երկու վարձերից հետո Բաղդին մեղադրեց Բարգիկան քրդերի այդ ոտնձգությունների համար և հրամայեց նրան՝ ճնշելու խռովարարների ելույթը[57]: Բաղդի միջամտությամբ էլ՝ 984թ. սկզբներին հաշտություն կնքվեց Ֆախր ադ-Դաուլայի և ապստամբների միջև: Սակայն 985/6թ. Բուի իշխանը կրկին հարձակվեց նրանց վրա և գերի վերցրեց խռովարարների առաջնորդին, որն էլ մահացավ ստացած հուժկու հարվածից[58]:

Բաղդի հակվածությունը Ֆախր ադ-Դաուլայի կողմը խիստ թշնամաբար ընդունեց Աղուդ ադ-Դաուլայի որդին՝ Շարաֆ ադ-Դաուլան: Վերջինս հարմար առիթ էր որոնում՝ Ջիբալ ներխուժելու և Բաղդին ջախջախելու համար[59]: Հիջրի 377 (987/8)թ., երբ նա հաստատվեց Բաղդադում, որոշեց այնուամենայնիվ դիմել այդ քայլին: Կարաթագին ալ-Ջահշիյարիի գլխավորությամբ՝ Շարաֆ ադ-Դաուլան մեծաթիվ զորք ուղարկեց Ջիբալ: Դրանով Բուի իշխանը ցանկանում էր ազատվել թե՛ Բաղդից և թե՛ իր զորքերի գլխավոր հրամանատար Կ. ալ-Ջահշիյարիից, որը բավական հանդուգն էր դարձել[60]: Երկու կողմերի զորքերը հանդիպեցին Կարմասինի (Քերմանշահի) շրջանում, ուր շուտով փախուստի դիմեց Բաղդը: Բուական զորքերը, ինչպես վկայում են եղած նյութերը, իջևանեցին նույն տեղում, և ընդամենը մեկ ժամ հետո Բաղդը հանկարծակի հարձակման անցավ՝ հակառակորդին հնարավորություն չտալով դիմադրելու: Նա շատերին սպանեց և բռնագրավեց դայլամական զորքի ողջ ունեցվածքը: Խուճապի մատնված Կ. ալ-Ջահշիյարին վոքրաթիվ խմբով հազիվ փրկվեց և շտապեց Բաղդադ: Շատ կարևոր հաղթանակ տարած Բաղդը գրավեց ամբողջ Ջիբալը և, ինչպես նշում են արա-

բալեզու աղբյուրները, հզորացավ ու անհնազանդ դարձավ[61]:

Այս իրադարձությունից հետո քուրդ իշխանը ձեռք բերեց քաղաքական որոշակի անկախություն, որը մինչ այդ, ինչպես տեսանք, այսպես թե այնպես, կախման մեջ էր Բուիներից: Այնուհանդերձ, հզորանալով, նա հարաբերությունները չվատթարացրեց իր գլխավոր մրցակիցներից մեկի՝ հատկապես Ֆախր ադ-Դաուլայի հետ՝ նրան օգնություն ցույց տալով անհրաժեշտության դեպքում[62]: Վերջինիս մահից հետո Բադրը նույնիսկ նշանակվեց նրա կնոջ և անչափահաս որդու խնամակալն ու խորհրդատուն[63]: Ֆախր ադ-Դաուլայի մահից հետո Բադրը բարիդրացիական հարաբերություններ հաստատեց այս անգամ Բուի մեկ այլ իշխանի Բահա ադ-Դաուլայի հետ[64]:

Չնայած Բադրի և Բահա ադ-Դաուլայի հարաբերությունները մնացին բարիդրացիական, բայց վերջինիս վեզիր Ամիդ ալ-Ջույուշը հիջրի 396 (1006)թ. դելմիկ մի զորավարի գլխավորությամբ զորք ուղարկեց՝ Բանդանիջինի քրդերին ջարդելու և կարգի հրավիրելու համար: Սակայն ապարդյուն: Քրդական մեծաթիվ զորախմբերը խայտառակ պարտության մատնեցին Բահա ադ-Դաուլայի զորքին[65]:

X դարի վերջերին և XI դարի սկզբներին, դատելով սկզբնաղբյուրների լռությունից, Բադրի և Բուի իշխանների հարաբերություններում, ինչպես նաև նրա իշխանության ներքին կյանքում էական տեղաշարժեր տեղի չունեցան: Քուրդ ամիրան շարունակեց բարիդրացիական հարաբերություններ պահպանել, մասնավորապես, Բուի Բահա ադ-Դաուլայի հետ: Ելնելով իր իշխանության անվտանգությունից և իր դիրքերն ամրապնդելու անհրաժեշտությունից՝ Բադրը հարկադրված էր նաև հարաբերվել Բուիների թե՛ կողմնակիցների և թե՛ նրանց հակառակորդների հետ:

Հիջրի 397(1006/7)թ. Իրաքի պաշտոնական կառավարչի՝ Աբու Ջա՛աֆար ալ-Հաջաջի խնդրանքով Բադրը մեծաթիվ զորք ուղարկեց Բաղդադի վրա հարձակում գործելու համար: Ինչպես երևում է սկզբնաղբյուրների հաղորդումներից, Բադրը նման քայլի դիմեց, որովհետև Բահա ադ-Դաուլայի իրաքյան նոր կառավարիչ Աբու Ալի Ամիդ ալ-Ջույուշը նույն թվականին Խորասանի ճանապարհների վերակացու էր նշանակել նրա հակառակորդին՝ քուրդ Աննազյան Աբու-լ-Ֆաթհին: Այդ էլ պատճառ դարձավ, որ նա քացեիքաց մասնակցի Բաղդադի պաշարմանը, որը տևեց մեկ ամիս: Պաշարմանը մասնակցում էր նաև Բուի իշխանի Իրաքի նախկին կառավարիչ, ապստամբ Աբու Ջա՛աֆար ալ-Հաջաջը:

Բադրի զորքի կազմում Աբբասյան մայրաքաղաքի գրավմանը մասնակցում էին նաև ընդդիմադիր քուրդ ամիրաներ Հինդի իբն Սա՛ադին, Աբու Ի՛սա Շադի իբն Մուհամմադը, Վառամ իբն Մուհամմադը և արաբ դժգոհ տարրերը՝ թվով ավելի քան 10 հազար մարդ[66]:

Քուրդ Աբու-լ-Ֆաթհ իբն Աննազը շտապեց Բաղդադ՝ Աբու Ալի Ամիդ ալ-Ջույուշի հետ հակառակորդների միացյալ զորքերին հակահարված տալու նպատակով: Բաղդադի պաշտպանությունը քուրդ Աննազյան ամիրայի հետ

միասին մեկ ամիս մասնակցեցին նաև թյուրքական զորաջոկատները: Սակայն, շուտով լուր ստացվեց Բահա ադ-Դաուլայի բանակից Բասրայի ըմբոստ տեր Աբու-լ-Աբբաս իբն Վասսիլի կրած պարտության և դեպի Բաղդադ շարժվող բուական զորքերի մասին: Դա էլ խուճապ առաջացրեց Բաղդադը պաշարող զորքերում: Աբու Ջա՛աֆար ալ-Հաջաջը քուրդ ամիրա Աբու Խսայի հետ մեկնեց Հուլվան և սկսեց բանակցել Բահա ադ-Դաուլայի հետ՝ հաշտություն կնքելու համար: Այդ ընթացքում Բաղդը հասցրեց Աննազյան Աբու-լ-Ֆաթհից խլել Հուլվանն ու Կարմանսինը: Աննազյան Աբու-լ-Ֆաթհը հեռացավ այնտեղից և հաստատվեց արաբ Ուկայլիների իշխան Ռաֆի՛ իբն Մուկ՛անի մոտ:

Թեև Ուկայլիների և Հասանվայհների միջև առկա էին բարիդրացիական հարաբերություններ, բայց Աբու-լ-ֆաթհին իր տիրույթներից հեռացնելու վերաբերյալ ժխտական պատասխան ստանալով Ռաֆի՛ իբն Մակ՛անից, Բաղդը զորք ուղարկեց Տիգրիսի արևելյան շրջանները, այրեց նրա բնակավայրը Մատիրայում, գրավեց Բարդան բերդն ու գերեվարեց շրջանի ազգաբնակչությանը: Այս իրադարձություններից հետո քուրդ ամիրա Աբա-լ-Ֆաթհ իբն Աննազը մեկնեց Բաղդադ՝ Ամիդ ալ-Ջուլուշի մոտ, որը խոստացավ նրան աջակցել ընդդեմ Բաղդ իբն Հասանվայհի՝ Բասրայի տիրոջ Աբու-լ-Աբբասին ջախջախելուց հետո[67]:

Այս իրադարձությունները, անշուշտ, բավական սրեցին Բահա ադ-Դաուլայի և Բաղդի վախհարաբերությունները: Նույն թվականին էլ (1006/7թ.) քուրդ իշխանը երեք հազարանոց զորք տրամադրեց Բասրայի ըմբոստ տիրոջը՝ Բուի իշխանից Ահվազը խլելու համար:

Բասրայի տերը բուական զորքից պարտություն կրելով՝ դիմում է փախուստի և փորձում ապաստան գտնել Բաղդի մոտ: Քուֆայից անցնելով Տիգրիս՝ նա հասնում է Խանիկին: Այստեղ էլ Աննազյան Աբու-լ-Ֆաթհը ձերբակալում է նրան և մահապատժի ենթարկում[68]:

Բասրայի տիրոջն ասպարեզից վերացնելուց հետո Բուի Բահա ադ-Դասալան որոշեց հաշիվները մաքրել Բաղդի հետ՝ պատճառած անհանգստության և Իբն Վասսիլին օժանդակելու, ինչպես նաև Բաղդադի վրա կատարած հարձակման և շուրջ մեկ ամիս այն պաշարելու համար: Նա հրամայեց Ամիդ ալ-Ջուլուշին՝ մեկնել Ջիբալ և հակահարված տալ Բաղդին: Գունդեշաբուրում, խուսափելով ընդհարումներից, Բաղդը Բուի զորահրամանատարին առաջարկում է դրամական փոխհատուցում, որով կողմերը հաշտություն են կնքում: Դրանից հետո Բաղդը սկսում է հարաբերություններ հաստատել Բուի տարբեր ընտանիքների հետ՝ նրանց հաճախ ցուցաբերելով ռազմական օգնություն[69]:

Հիջրի 400 թվականից (1010թ.) Հասանվայհների իշխանությունում սկիզբ առած ներքին հակասությունները ոչ միայն թուլացրեցին Բաղդի դիրքերը, այլև՝ ի վերջո հանգեցրեցին նրա սպանությանը (1015թ.): Այս խժդժությունների պատճառը դարձավ նրա որդին՝ Հիլալը, որը լուրջ հավակնություններ

դրսևորեց հոր տիրույթների և հարստության նկատմամբ:

Սեր ձեռքի տակ եղած նյութերը վկայում են, որ Հիլալի մայրը Շադինջան քրդերից էր, որից Բադրը բաժանվեց որդու ծնվելուց անմիջապես հետո: Այդ ցեղի ներկայացուցիչն էր նաև Բադրի հակառակորդը, մեզ ծանոթ Աբու-լ-Ֆաթի իբն Աննազը: Հիլալն ապրեց մոր խնամքի տակ և զրկվեց հոր դաստիարակությունից, որի հետևանքով էլ նա բավական հանդուգն էր դարձել:

Զգալով այդ Բադրը նրան որպես ավատատիրույթ տվեց Սամաղանը: Հիլալը սիրահոժար ընդունեց հոր որոշումը և հնարավորություն ունեցավ ազատ և ինքնուրույն գործելու: Շուտով սրվեցին Հիլալի և հոր հարաբերությունները՝ Շահրեզուրի նկատմամբ դրսևորած հավակնությունների և նրա տիրոջ՝ Իբն ալ-Մաղիին ցուցաբերած վատ վերաբերմունքի համար: Հիլալը պաշարեց Շահրեզուրը, գրավեց այն և սպանեց Իբն ալ-Մաղիին ու գերեվարեց բնակչությանը: Հիլալը, որի արարքն առաջացրեց հոր զայրույթը, սկսեց սիրաշահել Բադրի զինակիցներին, կաշառել նրանց, որի հետևանքով շատերն անցան նրա կողմը: Բադրը միջոցներ ձեռնարկեց հանդուգն որդուն կարգի հրավիրելու համար: Հայրն ու որդին հանդիպեցին Դինավարի մոտակայքում: Մարտի դաշտում Բադրի զորքերից շատերը անցան Հիլալի կողմը, Բադրը գերի ընկավ:

Հիլալը հորն առաջարկեց մնալ ամիրայի իր պաշտոնում, պայմանով, որ իրեն վստահվի զորքերի հրամանատարությունը: Բադրը հրաժարվեց, խնդրեց իրեն մի ամրոց տրամադրել՝ կյանքի վերջին շրջանը այնտեղ անցկացնելու նպատակով: Հիլալը բավարարեց հոր խնդրանքը՝ տալով նաև որոշակի քանակությամբ հարստություն: Հաստատվելով ամրոցում՝ Բադրը սկսեց դավեր նյութել որդու դեմ: Նա կապվեց իր գլխավոր հակառակորդներից մեկի՝ քուրդ Աբու-լ-Ֆաթի իբն Աննազի և Ասադաբադում գտնվող Աբու Իսա իբն Շադիի հետ, նրանց հրահրելով որդու դեմ: Իբն Աննազը գրավեց Քերմանշահը, իսկ Իբն Շադին՝ Սաբուրխվաստը, և այն թալանելուց հետո շարժվեց դեպի Նեհավանդ:

Հիլալին ջախջախելու նպատակով, Բադրը դիմեց նաև Բուի Բահա ադ-Դաուլային: Վերջինս Ֆախր ալ-Մուլք Աբու Ղալիբ անունով մի զորավարի գլխավորությամբ մեծաքանակ զորք ուղարկեց՝ Բադրին օգնելու համար: Բուական բանակը մարտի դաշտում գերի է վերցնում Հիլալին և ներխուժում նրա ամրոցը, բռնագրավելով մեծաքանակ հարստություն՝ 40 հազար «Բադրա» դիրհեմ, 400 ոսկյա «Բադրա» և այլ թանկարժեք ադամանդներ, զենք և հանդերձանք: Ապա՝ ամրոցը հանձնվում է Բադրին[70]: Հետաքրքիր է, որ բռնագրավված հարստության չափերը միջնադարում այնքան են ուռճացվել, որ ժամանակի բանաստեղծները դրան ձոնեցին կասիդաներ[71]: Իբն Խալդունն այս կապակցությամբ գրում է, թե ասում են, որ երբ Բուիները ներխուժեցին Բադրի ամրոցը, զանազան հարստությունների թվում հայտնաբերեցին քառասուն հազար «Բադրա» և 400 հզ «Բադրա դիրհեմ»[72]:

Անկախ աղբյուրներում վերը նշված թվերի հակասությունից խիստ ու-

շագրավ է, որ Բադրն իր անունով նաև դրամ էր թողարկում[73]: Հանգամանք, որը ևս մեկ անգամ հաստատում է Ջիբալում նրա հզորանալու և փաստական անկախության մասին:

Այսպիսով, Բադրի ու որդու միջև ծագած հակամարտություններին վերջ տրվեց Բուի իշխան Բահա ադ-Դաուլայի միջամտությամբ: Դա էլ Բադրին պարտավորեցրեց Բուի իշխանի հանդեպ ունենալ բարեկամական դիրքորոշում, հաճոյանալ և անել ամեն ինչ՝ նրան գոհացնելու համար: Թերևս դրանով էլ պետք է բացատրել այն իրողությունը, որ նա Շահրեզուրն ուղղակի հանձնեց Ամիդ ալ-Ջույուշին, որն էլ նշանակեց իր կուսակալներին[74]: Հիջ. 404թ. (1014թ.) հուլիսին Բադրի թոռանը՝ Տահիր իբն Հիլալին հաջողվեց Շահրեզուրից դուրս վռնդել Ֆախր ալ-Մուլքի զորքը: Շահրեզուրը շուրջ 2 տարի Տահիր իբն Հիլալի տիրույթը դարձավ, որը 1016թ. անցավ քուրդ Աննազյաններին՝:

Վերը նշած իրադարձություններից հետո Բադրի և որդու հարաբերությունները շարունակեցին մնալ խիստ թշնամական: Այդ է վկայում այն փաստը, որ նա այդպես էլ իր որդուն չազատեց Բաղդադի բանտից: 1015թ. Հիլալին հաջողվեց ազատվել բանտարկությունից, հոր սպանությունից հետո Ջիբալում ստեղծված անկայուն և խնամը վիճակում՝:

Ինչպես նշվեց, Բադրի և որդու հակասությունները բացասաբար անդրադարձան Հասանվայհների իշխանության ներքին կյանքի վրա: Հոր և որդու հակասություններն ու միմյանց դեմ ռազմական գործողությունների ծավալումը որոշակի տրամադրություններ առաջացրեցին նաև բանակում: Այդ ամենն ի վերջո հանգեցրեց Բադրի սպանությանը, որը տեղի ունեցավ 1015թ.:

Արաբալեզու սկզբնաղբյուրները հայտնում են, որ այդ թվականին Բադրը՝ քուրդ Հուսեյն իբն Մասու՛դի տիրույթը գրավելու նպատակով, պաշարեց նրա «Քուսհադ» ամրոցը: Բադրի կողմնակիցները զայրույթով ընդունեցին ձմռանն այդ գործողությունը իրականացնելու միտքը և որոշեցին վերջապես նրան ասպարեզից վերացնել: Պաշարման ընթացքում Ջուրկան քրդական ցեղը դավադրաբար սպանում է Բադրին, թալանում զորքը և հեռանում: Քուրդ Հուսեյն իբն Մասու՛դը հրամայում է Բադրի դին թաղել Ալիի գերեզմանոցում: Բադրի սպանությունից հետո լուծարվում է նաև նրա զորքը:

Լսելով պապի սպանության մասին՝ Տահիր իբն Հիլալը Շահրեզուրից շտապում է Դինավար՝ իշխանությանը տիրելու համար: Սակայն Բուի Շամս ադ-Դաուլայի զորքի հետ տեղի ունեցած մարտերում Տահիրը գերի է ընկնում և բանտարկվում Համադանում: Շամս ադ-Դաուլան, տիրելով որոշ շրջանների, բռնագրավում է նրա ունեցվածքը: Այնուհետև, լուրերը և շաղինջան քրդերը ճանաչեցին քուրդ Աննազյան իշխան Աբու աշ-Շաաքի գերիշխանությունը:

Ջիբալում տեղի ունեցող ռազմաքաղաքական անցուդարձերի նկատմամբ անտարբեր չի մնում Իրաքի Բուի տիրակալ Սուլթան ադ-Դաուլան: Նա իսկույն բանտից ազատում է Բադրի որդի Հիլալին, զորք տրամադրում և

հանձնարարում Շամս ադ-Դաուլայից հետ վերցնել գրավված տարածքները: 1015թ. ապրիլ ամսին տեղի ունեցած ճակատամարտում Հիլալի կողմնակիցները դիմում են փախուստի: Հիլալին, որի զորքը վերադառնում է Բաղդադ, գերի են վերցնում և սպանում մարտի դաշտում[77]: Այս հաղթանակից հետո Շամս ադ-Դաուլան նվաճում է Բաղդի բոլոր տարածքները և վերադառնում Համադան:

Ինչպես նշվեց վերևում, ըստ արաբ պատմիչների, Բաղդին էին պատկանում Սաբուրխվաստը, Դինավարը, Բոբոջիրդը, Նեհավանդը, Ասադաբադը և Ահվազից մի մասն ու դրանց միջև ընկած ամրոցներն ու շրջանները[78]: Բաղդին, ինչպես հայտնի է, հաճախ ենթարկվում էր Հուլվանը և ժամանակ առ ժամանակ՝ նաև Շահրեզուրը:

Հիջ. 406թ. (1016թ.) Շամս ադ-Դաուլան ազատ է արձակում Բաղդի թոռանը՝ Տահիր իբն Հիլալին: Որոշ ժամանակ անց նա, իր շուրջ համախմբելով համապատասխան կողմնակիցների, մարտական գործողությունների է դիմում ընդդեմ Հուլվանի քուրդ Աննազյանների: Երկու անգամ պարտության մատնելով Աննազյան իշխան Աբու աշ-Շաուքին, Տահիրը նրա հետ հաշտություն է կնքում, ապա ամուսնանում է նրա քրոջ հետ: Աբու աշ-Շաուքը իր եղբոր Սա'դիի վրեժը լուծելու համար դավադրաբար սպանում է Տահիրին[79]:

Այսպիսով, Բաղդի սպանությամբ Հասանվայհների ընտանիքը աստիճանաբար վերացավ քաղաքական թատերաբեմից, թեև նրա հետնորդների ձեռքում մնաց միայն Սարմաջ ամրոցը: Նրանց վերջին ժառանգորդը՝ Բաղդ իբն Տահիր իբն Հիլալը սելջուկյան Իբրահիմ Յաննալից որպես կալվածք ստացավ Դինավարն ու Քիրմանշահը[80]:

Մեզ հասած սկզբնաղբյուրների նյութերը միաբերան վկայում են, որ հատկապես Բաղդ ամիրայի օրոք Հասանվայհների իշխանությունը ծաղկում ապրեց: Ավելի քան 30 տարի (369-405թթ./979-1015թթ) իշխանության գլուխ մնալով՝ նա աչքի ընկավ իր ճկուն քաղաքականությամբ, լայն համբավ վայելեց խալիֆայությունում, որպես խելացի, արդարադատ և առատաձեռն իշխան[81]:

Նա ճանաչվեց որպես Ջիբսոլի լավագույն և օրինակելի ամիրա, որի իշխանությունում տիրում էր ներքին կայունություն[82]: Բաղդը հետևեց բանակում կարգուկանոնին, պայքար մղեց իր այն կուսակալների դեմ, որոնք իրենց գործունեությամբ խանգարում էին գյուղատնտեսության զարգացմանը[83]:

Մեզ հասած փաստական տվյալները միաժամանակ ցույց են տալիս, որ Բաղդի օրոք Հասանվայհների իշխանությունում զարգացում ապրեցին ոռոգման համակարգն ու անասնապահությունը: Օրինակ, ինքն իրրև խոշոր ավատատեր, ուներ ավելի քան քսան հազար գլուխ անասուն:

Իր հետևողական գործողություններով, ինչպես վկայում է Աբու Շուջա՝ առ-Ռուզրավարին, Բաղդը կարգի հրավիրեց Բարզիկան ցեղին, որն, ըստ պատմիչի, երկրի վրա թերևս ամենավտանգավոր ցեղն էր, որը բնակչությանն ու գյուղատնտեսությանը պատճառել էր մեծ վնասներ[84]: Հնարավոր

բոլոր միջոցներով նա նպաստեց հատկապես հացազգի կուլտուրաների զարգացմանը, որոնք բավական անկում էին ապրել ավազակային հարձակումների հետևանքով[86]: Միաժամանակ զգալի ուշադրություն հատկացրեց առևտրի զարգացմանը: Յուրաքանչյուր վայրում նա շուկա էր հիմնում. ուր, ինչպես նշում է Աբու Շուջա՛ առ-Ռուզրավարին, բերվում էին անհրաժեշտ տեսակի ապրանքներ, որոնք և պարտադիր կարգով վաճառվում էին մատչելի գներով[86]: Նա հսկայական գումարներ հատկացրեց ճանապարհաշինարարությանը, վերահսկողությանը, ջրանցքների ու ջրհորների կառուցմանը:

Եղած տվյալները վկայում են, որ Բաղդը տարեկան հարյուր հազար դինար էր տրամադրում Մեքքայի և Մեդինայի ճանապարհների պահպանմանը, ջրերի մաքրմանը և ջրհորներ փորելուն[87]: Յուրաքանչյուր ջրի, աղբյուրի մոտ նա անպայման գյուղ էր հիմնում[88], որը, ինչպես դժվար չէ ենթադրել, հեշտացնում էր ոռոգման գործը:

Հայտնաբերված արաբերեն վիմագիր արձանագրություններն իրենց հերթին վերահաստատում են սկզբնաղբյուրների հաղորդումները՝ քուրդ ամիրայի շինարարական լայն գործունեության մասին: Մինչև օրս արևելագիտական շրջանակներին հայտնի են այդ կարգի քուֆի մի քանի արձանագրություններ, որոնք միաժամանակ վկայում են, որ ինչպես արաբա-մահմեդական ամիրայություններում, այնպես էլ Հասանվայհների իշխանությունում արաբերենը հանդիսանում էր հաղորդակցության և գործավարության հիմնական լեզուն:

Քուրդ ամիրայի շինարարական վիմագիր արձանագրություններից առաջինը հայտնաբերվեց 20-ական թթ. եվրոպացի վիմագրագետ Էռնեստ Հերցֆելդի կողմից[89]: Արձանագրությունը, որը վերաբերում է կամրջի շինարարությանը, փորագրված է ժայռի վրա՝ Խոռեմաբադից-Անդիմեշգ տանող ճանապարհին:

Համաձայն արձանագրության, տվյալ շինարարությունը իրականացվել է «Ամիրա Աբու ան-Նաջմ Բադր իբն Հասանվայհ իբն Հուսեյնի հրամանով՝ հիջ. 374թ. (984թ.)»[90]:

Ինչպես դժվար չէ նկատել, քուրդ ամիրան իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո սկսել է մասնավորապես ամրոցների և կամուրջների շինարարությունը: Բադրի կողմից նման գործունեությունը նպատակ է ունեցել նախ և առաջ ամրապնդել Հասանվայհների իշխանությունը Ջիբալում և դյուրացնել հաղորդակցությունը լեռնային այդ զանգվածների միջև: Այդ է հավաստում մեզ հասած քուրդ ամիրայի շինարարական երկրորդ արձանագրությունը, որը, ինչպես նշվեց, քուֆի գրությամբ խնամքով փորագրված լինելով, գտնվում է Խոռեմաբադի դպրոցներից մեկում: Ենթադրում ենք, որ այն ևս վերաբերվել է կամրջի շինարարությանը, որի կառուցումը նրա հրամանով տևել է ուղիղ տասը տարի՝ հիջ. 389-399թթ. (998 -1008թթ.)[91]:

Բադրի մեկ այլ վիմագիր արձանագրությունը, որը վերաբերվել է հիջ. 404թ. (1013թ.) շենքերից մեկի շինարարությանը, գտնվում է դարձյալ Խոռե-

մաբաղում՝ Զեյդ իբն Ալիի դամբարանում: Նրանում քուրդ իշխանը ներկայացվել է որպես հավատացյալների առաջնորդի (այսինքն՝ Աբբասյան խալիֆայի-Ա.Փ.) «մսվլան» (սպասավորը, երդվյալ ներկայացուցիչը և այլն)[92]:

Այսպիսով, ինչպես նշվեց, մեր ձեռքի տակ եղած սակավ, բայց փաստական կարևոր արժեք ունեցող վիմագիր արձանագրությունները վկայում են Բաղդի օրոք Հասանվայհների իշխանությունում շինարարական տարբեր կառույցների մասին:

Բացի վերոհիշյալից, մահմեդական աշխարհում քուրդ ամիրան փառաբանվեց կրոնական իր բարեգործությամբ և մահմեդական զանազան հաստատությունների կառուցմամբ: Թերևս դա է պատճառը, որ արաբական պատմագրությունն այդքան ակնածանքով է խոսում նրա մասին, շեշտելով մասնավորապես նրա մեծ ծառայություններն իսլամին[93]: Այդ մասին մեզ հասած նյութերը միաժամանակ ցույց են տալիս, որ X-XIդդ. քրդական վերնախավի գործուն մասնակցությամբ իսլամի տարածումը քրդերի մեջ ընդունում է զանգվածային բնույթ[94]:

Հաշվի առնելով Բաղդի հզորացումն ու մահմեդական ահռելի բարեգործությունները՝ 998 թ. Աբբասյան ալ-Կադիր խալիֆան նրան շնորհեց «Նասիր ադ-Դին վա ադ-Դաուլա» ամենապատվավոր լակաբը (կոչումը)[95]: Ապա, Բահա ադ-Դաուլայի երաշխավորությամբ՝ խալիֆան միաժամանակ նրան նշանակեց Ջիբալի կառավարիչ[96]: Դրանից հետո Բաղդը հզորացավ և ճանաչում ձեռք բերեց, ինչպես նշվեց վերևում, որպես տվյալ տարածքի «լավագույն իշխաններից մեկը»[97]:

Այսպիսով, միջնադարյան սկզբնաղբյուրների նյութերի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ Հասանվայհների իշխանությունը, որի հենարանը հիմնականում քրդական ցեղերն էին, ձևավորվեց բուսական տիրապետության շրջանակներում և նրա ծաղկման ժամանակ: Դա ավատատիրական ժամանակավոր մի կազմավորում էր մեկ ուրիշի ներսում, որի գոյատևումը, անշուշտ, պայմանավորված էր երկու կողմերի փոխհարաբերություններով, քաղաքական և տնտեսական շահերով: Չնայած ժամանակակից իրանական Քուրդիստանը և հարակից շրջանները, ուր գործեցին Հասանվայհները ձևականորեն համարվեցին բուսական տարածքներ, սակայն տեղական իշխանությունը, ինչպես նշվեց, ամբողջությամբ պատկանում էր քրդերին: Բուիները բավարարվում էին այն ռազմական աջակցությամբ, որ ստանում էին Հասանվայհներից, իսկ դրա վախարեն Հասանվայհին և Բաղդին հնարավորություն էր տրված ազատ գործելու և ընդլայնելու իրենց քաղաքական ազդեցությունը Ջիբալի քրդական շրջաններում:

Ստեղծված բարենպաստ պայմանները հետզհետե Հասանվայհներին հնարավորություն տվեցին ձեռք բերել քիչ թե շատ քաղաքական անկախություն, թեև նրանք կամա թե՛ ակամա հաշվի էին նստում ավելի զորեղ Բուիների հետ: Հասանվայհիների և քրդական ցեղերի հակասությունների և արտաքին հարվածների հետևանքով դինաստիան վերացավ քաղաքական

ասպարեզից: Բաղդի սպանությունից հետո Հասանվայհիների տարածքները հիմնականում անցան Բուիներին, բացառությամբ որոշ շրջանների (Հուլվան, Շահրեզուր), ուր ամրապնդվեցին քուրդ Անազյանները:

SUMMARY

With the political decline of the Abbaside Caliphate in IX-X A.D. and other reasons a number of Kurdish political units ruled by Moslem dynasties has come forward. Those were in fact short living traditional societies. Among such units was the "state" of Hasanwayhides in Jibal (Eastern or Iranian Kurdistan, established by the ruler of the Kurdish al-Barziniya or al-Barzikan tribe, Hasanawayh Ibn al-Kurdi (died 979).

The dynasty of Hasanwayhides, that dominated the mentioned area more than half a century (961-1015), established close relations first of all with the Iranian Delmik Buides. This dynasty was rather influential not only for Hasanwayhides, but also for the entire Abbaside Caliphate. With the centre in Dinavar, the Hasanwayhides extended their power over Hamadan, Nehavand, Borojird, Asadabad and other regions.

In Western Iran and neighbouring regions the Hasanwayh Kurds, independent to some extent, were fearful of Iranian Buides, who penetrated into the same regions. Although the activities of both sides were more or less anti-Arabic, in territorial issues their interests were conflicting.

The study of medieval Arabic sources leads to a conclusion that the state of Hasanwayhides, based primarily on Kurdish tribes, had developed within the Buide domination and during its flourishing period. It was a short-living traditional unit that existed within another unit and its existence was highly dependent on political and economic relations of both units. Despite the fact that these regions were formally Buide, the local power entirely belonged to the Kurds. The Buides were satisfied with the military assistance provided by the Hasanwayhides, which permited them to exercise their political influence in the Kurdish regions of Jibal.Contradictions between the dynasty and the Kurdish tribes, as well as other reasons removed the Hasanwayhides from the political scene. In 1015, with Badr's assassination, the Buides, with the exception of some regions (Hulwan, Shahrezur), where Kurdish Annazians were established, regained the Hasanwayhide regions.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. А.Поладян, Курды в VII-X веках (по арабским источникам), Ереван, 1987, с. 92-93.

2. Ջիբալ - (արաբ. *ջաբալ* «սար» գոյականի հոգնակի թիվն է) Համադան կենտրոնով արաբական խալիֆայության վարչատարածքային բաժանումներից էր, որի կազմի մեջ էին մտնում Իրաքի և Իրանի միջև ընկած բնակավայրերն ու լեռնային զանգվածները: XII դարից Արաբական Իրաքից զանազանվելու համար XII դարից Ջիբալը կոչվեց նաև «Աջամական Իրաք» (Ի՛րակ ալ-Ա՛ջամ): Այդ մասին տես՝ Լը Ստրենջ, Բուլդան ալ-խիլաֆա աշ-շարկիյա, Բաղդադ, 1954, էջ 220 (արաբ.); В.В.Бартольд, Соч., VII, М., 1971г., с. 198-202.

3. 935թ. Գորգանում (Վրկան) և Թաբարիստանում Զիյարիների դինաստիայի (928-1042թթ) հիմնադիր Մարդավիջ իբն Զիյարի սպանությունից հետո նրա վարձկան զորքերի հրամանատարներ դիլմիկ Իբն Բուվայհի (Բուի) երեք եղբայրները՝ Ալին, Հասանը և Ահմադը տիրեցին Արևմտյան Իրանին (И. Петрушевский, История Ирана, М., 1971г., с. 138-139): Դրանով Արևմտյան Իրանում հաստատվեց Բուիների իշխանությունը (935-1055թթ) և սպառնալիքի տակ դրվեց Աբբասյան արքունիքը: 945թ. դեկտեմբերին Ահմադը հարձակվեց Բաղդադի վրա և հեշտությամբ գրավեց արաբական Իրաքը: Սարսափահար ալ-Մուաթաքֆի խալիֆան հարկադրված ընդունեց Բուի զորավարին և հրապարակայնորեն նրան շնորհեց «Ամիր ալ-ումարա» (իշխանաց իշխան) տիտղոսը, ինչպես նաև «Մուիզ ադ-Դաուլա» պատվավոր լակարը՝ կոչումը (Կ. Բրոքելման, Թարիխ աշ-շուբ ալ-իսլամիյա, Բեյրութ, 1968, էջ. 245): Նման լակարներով պարգևատրվեցին նաև Ահմադի մյուս երկու եղբայրները՝ Ալին և Հասանը (Իբն ալ-Ասիր, ալ-Քամել ֆիթ-թարիխ, VI, ալ-Կահիրա, 1353, u. 314): Դրանով քաղաքական ողջ իշխանությունն անցավ բուիներին, որի հետևանքով, փաստորեն, շուրջ երկու հարյուր տարի (945-1132թթ) խալիֆայության գոյությունը ձևական բնույթ կրեց: Մահմեդական աշխարհում ճանաչվեց միայն նրա հոգևոր իշխանությունը և իր գոյությունը պահպանելու համար նա սկսեց բուիներին շռայլել պատվավոր տիտղոսներ (Կ. Բրոքելման, Թարիխ, u. 246): Բուիների պետության հիմնական կենտրոնները դարձան Բաղդադը և նրանց մայրաքաղաք Շիրազը:

4. К. Босворт, Нашествия варваров: появление тюрок в мусульманском мире.- "Мусульманский мир - 950-1150", М., 1981г., с.27.

5. Стенли Лен-Пул, Мусульманские династии, СПб, 1899, с. 114; Է. Ցամբաուեր, ալ-Անսար ուա-լ-ուսուրաթ ալ-հաքիմա ֆիթ-թարիխ ալ-իսլամի, ալ-Կահիրա, 1951, u. 321:

6. Cl. Cahen, Hasnaway.- "The Encyclopaedia of Islam (EI)", III, London, 1966, p. 258-259; V. Minorsky, Kurdistan and Kurds (EI), II, London, 1927, p. 1137.

7. Մուհամմադ Ամին Զաքի, Թարիխ ադ-դուալ աա-լ-իմարաթ ալ-քուրդիյա ֆի-լ-ահդ ալ-իսլամի, ալ-Կահիրա, 1948 (արաբ.), u. 69-89:

8. Ջալիլա Նաջի ալ-Հաշիմի, ալ-Իմարա ալ-Հասանվայհիյա ֆի ադ-Դինաուար ուաշ-Շահրեզուր, 348-406.- «Մաջալաթ ալ-մաջմաա՝ ալ-իլմի ալ-քուրդի», III, I, Բաղդադ, 1975 (արաբ.), u. 729-749:

9. Ibn Miskawaihi; The Experiences of the Nations, Ed. by H.F. Amidroz, II, Oxford, 1921.

10. Abu Shuja' Rudhrawari; Continuation of the Nations, Ed. by H.F. Amidroz and D.S. Margolious, III, Oxford, 1921.

11. Իբն ալ-Ջաուզի, Ալ-Մունթազամ ֆի թարիխ ալ-մուլուք, VII, Հայդարաբաղ. 1357 (արաբ.):

12. ալ-Ասիր, ալ-Քամել ֆիթ-թարիխ, VI-VII, ալ-Կահիրա, 1353 (արաբ.):

13. Իբն Խալդուն, Քիթաբ ալ-ի'բր աա-դիտուան ալ-մուբթադա ուա-լ-խաբար. IV, ալ-Կահիրա, 1284 (արաբ.):

14. Քասիր, ալ-Բիդայա ուան-նիհայա ֆիթ-թարիխ, XI, ալ-Կահիրա, 1932 (արաբ.):

15. Ibn Miskawaihi, II, p. 270-271; Իբն ալ-Ասիր, VII, էջ 37-38, Իբն Խալդուն, IV, էջ. 445-446:

16. Шараф-хан Бидлиси, Шараф-наме, I, с. 90.

17. Իբն ալ-Ասիր, VII, էջ 101, Իբն Խալդուն, IV, էջ. 454, 512-513:

18. Աշխարհագիր Յակութը գրում է, որ «Սարմաջը լեռնիրում՝ Համադանի և Խուզիսաանի միջև ընկած ամրացված բերդ է» (Տես՝ Յակութ, III, էջ 215): «Սարմախ» ձևով, որը կարծում ենք գրչական սխալ է, հանդիպում ենք Արու Դուլաֆի մոտ: Այն, ըստ աշխարհագրի, մի բրդի կողմից փորագրվել է ժայռի վրա: Նրա շարադրանքից երևում է, որ այն կատուցվել է Արու Այյուբ գյուղի մոտ (Абу Дулаф, Вторая записка, с. 25): Եվրոպացի հայտնի արևելագետ Լը Ստրենջը նշում է, որ մինչև օրս հայտնի չէ այս բերդի գտնվելու վայրը: Ամենայն հավանականությամբ այն պետք է գտնված լիներ Դինավարի կողքը (Լը Սարեյնջ, էջ 224):

19. Իբն ալ-Ասիր, VII, էջ 101, Իբն Խալդուն, IV, էջ 454:

20. Ստենլի Լեն-Պուլը դինաստիայի հիմնադրումը թվագրել է մոտավորապես 959թ. (Лен-Пул, Мусульманские династии, с. 114): Անհիմն է Մ.Ա. Զաքիի կարծիքը, որ իբր իշխանությունը հիմնադրվել է 941թ. Հասանվայհի հոր՝ Հուսեյնի կողմից (Մ.Ա. Զաքի, Թարիխ): Նույն սխալմունքը թույլ է տվել պատմաբան աս-Սադաֆին՝ իշխանությունը կոչելով ալ-Հուսայնիյա (աս-Սաֆադի, Դուալ ալ-իսլամ, I, u.246): Հայտնի արևելագետ Է. Ցամբաուերն ու իրաքցի պատմաբան Ջալիլա ալ-Հաշիմին իշխանության հիմնադրումը թվագրել են հիջ. 348 (959/60)թ. (Ցամբաուեր, էջ 321; Ջ. ալ-Հաշիմի, էջ 729):

21. Զեյդան, Թարիխ աթ-թամադդոն ալ-իսլամի, IV,ալ-Կահիրա, 1905, u.178:

22. Ibn Miskawaihi, v. II, p. 270; Իբն ալ-Ասիր, VII, էջ 37, Իբն Խալդուն, IV, էջ 445, 512-513:

23. Նույն տեղում:

24. Նույն տեղում:

25. Իբն ալ-Ասիր, VII, էջ 37:

26. Ibn Miskawaihi, v. II, p. 270.

27. Նույն տեղում:

28. Ibn Miskawaihi, II, p. 270-271; Իբն ալ-Ասիր, VII, էջ 37, Իբն Խալդուն, IV, էջ 445-446:

29. Նույն տեղում:

30. Ibn Miskawaihi, II, p. 273-274; Իբն ալ-Ասիր, h. VII, էջ 37-38, Իբն Խալդուն, h. IV, էջ 446:

31. Шараф-хан Бидлиси, Шараф-наме, I, М., с. 90.

32. Ibn Miskawaihi, II, p. 274: Իբն ալ-Ասիրն ու Իբն Խալդունը խոսում են Արու-լ-Ֆաթիհի՝ Հասանվայհի վճարած գումարի մասին, բայց չեն նշում ստույգ չափը: Տե՛ս՝ Իբն ալ-Ասիր, VII, էջ 38, Իբն Խալդուն, IV, էջ 446:

33. Ibn Miskawaihi, V. II, p. 274.
34. Шараф-хан Бидлиси, Шараф-наме, I, М., с. 90.
35. Ibn Miskawaihi, II, p. 361-364.
36. Կ. Բրոքելման,.էջ 246:
37. Տես՝ Ibn Miskawaihi, II, p. 364-366, 371, 375-376.
38. Նույն տեղում:
39. Նույն տեղում, էջ 365-366:
40. Նույն տեղում, էջ. 365, 376: Տես՝ նաև Իբն Խալդուն, IV, էջ 452:
41. Նույն տեղում, էջ 377-378:
42. Նույն տեղում, էջ 414-415:
43. Նույն տեղում, էջ 415:
44. Նույն տեղում, էջ 415: Նաև Իբն ալ-Ասիր, VII, էջ 101, Իբն Խալդուն, IV, էջ. 454, 513:
45. Նույն տեղում:
46. Ibn Miskawaihi, II, p. 415-416, Abu Shuja Rudrawari, III, p. 9-10: Տես նաև Իբն ալ-Ասիր, VII, էջ 102, Իբն Խալդուն, IV, էջ. 513-514:
47. Նույն տեղում: Տես՝ Cl. Cahen, Hasnawayh, p. 258.
48. Իբն ալ-Ջաուզի, VII, էջ 271:
49. Իբն ալ-Ասիր, VII, էջ 274:
50. Шараф-хан Бидлиси, Шараф-наме, I, с. 91.
51. Abu Shuja Rudhrawari, III, p. 9: Տես՝ Իբն ալ-Ասիր, VII, էջ 112:
52. Նույն տեղում, էջ 11-12: Տես՝ Իբն ալ-Ասիր, VII, էջ 104, Իբն Խալդուն, IV, էջ. 513-514:
53. Իբն Ջասիր, XI, Կահիրե, 1932 թ., էջ 354, Իբն ալ-Ջաուզի, VII, էջ 272:
54. Նույն տեղում: Տես՝ Abu Shuja Rudhrawari, III, p. 287-291.
55. Կ. Բրոքելման, էջ 246:
56. Իբն Խալդուն, IV, էջ 514:
57. Իբն ալ-Ասիր, VII, էջ 119:
58. Նույն տեղում, էջ 120:
59. Տես՝ Abu Shuja Rudhrawari, III, p. 139-140; Իբն ալ-Ասիր, VII, էջ 132; Իբն Խալդուն,IV, էջ 514:
60. Նույն տեղում:
61. Նույն տեղում:
62. Իբն ալ-Ասիր, VII, էջ 139:
63. Cl. Cahen, Hasnawayh, p. 258:
64. Abu Shuja Rudhrawari, p. 310:
65. Իբն ալ-Ասիր, VII, էջ 229:
66. Իբն ալ-Ասիր, VII, էջ 232-233; Իբն Խալդուն, IV, էջ. 514-515:
67. Նույն տեղում:
68: Իբն ալ-Ասիր, VII, էջ 233-234:
69. Նույն տեղում, էջ. 234, 237-238:
70. Իբն ալ-Ասիր, VII, էջ. 247-248, Իբն Խալդուն, IV, էջ. 515-516:
71. Նույն տեղում:
72. Իբն Խալդուն, IV, էջ. 515-516: Տես նաև Իբն ալ-Ջաուզի, VII, էջ 273:
73. Բաղդի թողարկած դրամներն առաջին անգամ հրապարակվել են եվրոպացի արևելագիտ-դրամագետ Գ. Սայլզի կողմից: Տես՝ Cl. Cahen, Hasnawayh, EI, III, p. 258:

74. Իբն ալ-Ասիր, VII, էջ 271, Իբն Խալդուն, IV, էջ 516:
75. Նույն տեղում:
76. Նույն տեղում, էջ 273:
77. Նույն տեղում, էջ.272-274:
78. Նույն տեղում:
79. Նույն տեղում, էջ 280: Տես նաև՝ Իբն Խալդուն, IV. էջ. 516-517:
80. Шараф-хан Бидлиси, Шараф-наме, I, с. 92:
81. Abu Shuja Rudhrawari, III, pp. 278-291. 297-299; Իբն ալ-Ասիր, VII. էջ 104. Իբն Խալդուն, IV, էջ 514; Իբն Թաղրիբիրդի, IV, էջ 169, Իբն Քասիր, XI, էջ. 353-354. Իբն ալ-Ջաուզի, VII, էջ. 271-272:
82. Նույն տեղում:
83. Նույն տեղում:
84. Abu Shuja Rudhrawari, III, p. 288:
85. Նույն տեղում:
86. Նույն տեղում, էջ 290:
87. Իբն Քասիր, XI, էջ 354, Իբն ալ-Ասիր, VII, էջ 272:
88. Նույն տեղում:
89. Այդ մասին տես՝ Manoochehr Sotoodeh, Drei Kufische Inschriften aus Iran,- Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft,- 125,2,1975, S.315:
90. Նույն տեղում:
91. Նույն տեղում, էջ 335-336:
92. Նույն տեղում, էջ 316:
93. Abu Shuja° RudNrawari, III, p. 287; Իբն ալ-Ասիր, VII, էջ. 271-272, Իբն Քասիր, XI, էջ.353-354, Իբն Թաղրիբիրդի, IV, էջ. 169, 255, ալ-Հանբալի, Շազարաթ ազ-զահաբ, III, ա.137: Այս կապակցությամբ Ջաուզին գրում է. «Յուրաքանչյուր տարի Բաղդը 1000 դինար էր հատկացնում, որպեսզի 20 մարդ ուխտագնացության (հաջ) գնար իր մոր և Ադուդ ադ-Դաուլայի փոխարեն, քանի որ նա էր (իմա՝ Ադուդ ադ-Դաուլան-Ա. Փ.) պատճառ դարձել նրա իշխանության գլուխ անցնելուն: Յուրաքանչյուր ուրբաթ նա չքավորներին և այրիներին, իբրև սադակա (բարեգործական նվիրատվություն), տալիս էր 10000 դիրհեմ: Յուրաքանչյուր տարի նա ծախսում էր 3000 դինար, որպեսզի Համադանի և Բաղդադի կոշկակարները կոշիկ պատրաստեն հաջ մեկնողների համար: Ամեն ամիս Բաղդը ծախսում էր 20000 դիրհեմ մեռածներին սավանելու վրա: Յուրաքանչյուր ամիս նա ծախսում էր 20000 դիրհեմ կամուրջներ կառուցելու վրա: Իր տարածքներում նա կառուցեց 3000 մզկիթ և իջևանատուն՝ օտարերկրացիների համար...Յուրաքանչյուր տարի Բաղդը 100000 դինար էր ուղարկում ալ-Հարամայնի (այսինքն, երկու սրբավայրերի՝ Մեքքայի և Մեդինայի - Ա.Փ.) բնակչության ողորմությունների, ճանապարհների պաշտպանության և այլ կարիքների համար: Նա գումարներ էր նվիրաբերում ավազանների կառուցմանը, ջրերի մաքրմանը, ճանապարհին սննդի հայթայթմանը, բնակչությանը հրահանգելով կատարել այդ ամենը: Նա ալ-Հարամայն (երկու սրբավայրեր), Քուֆա և Բաղդադ գումարներ էր ուղարկում՝ վերակացուներին, ֆակիհներին, գրակարդացներին, ուղբատներին և աղոթատների սպասավորներին բաժանելու համար: Երբ նա վախճանվեց, այդ ամենին վերջ տրվեց, և դա ազդեց նրա ընտանիքի վիճակի վրա, ուխտագնացությունը դադարեց: Բաղդը շատ էր աղոթում և փառաբանում Աստծուն...» (Իբն ալ-

Ջաուզի, VII, էջ. 271-272): Բացի այդ, 385թ. (995 թ.), շուրջ 20 տարի, Բաղդը կանոնավոր ամեն տարի հսկայական զումարներ էր ուղարկում ավազակապետերին՝ ուխտագնացներին չվնասելու և չթալանելու համար (Abu Shuja' Rudhrawari, III, p. 287; Իբն ալ-Ջաուզի, VII, էջ. 271-272, Իբն Քասիր, XI, էջ. 353-354, Իբն Թաղրիբիրդի, IV, էջ. 169, 255, ալ-Հանբալ, Շազարաթ ազ-զահաբ, III, u.137):

94. Այդ մասին ավելի մանրամասն տես՝ А. Поладян, Курды, с.66-73: Նույնի՝ Իսլամի տարածումը քրդերի մեջ VII-Xդդ. (ըստ արաբական աղբյուրների).- Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, VIII, Եր., 1985, էջ. 156-173:

95. Իբն ալ-Ասիր, VII, էջ. 193-195; Իբն Խալդուն, IV, էջ 514; Шараф-хан Бидлиси, Шараф-наме, I, с. 91; Իբն ալ-Ասիր, VII, էջ 271, Իբն Քասիր, XI, էջ 353, ալ-Հանբալ, Շազարաթ, III, էջ 173:

96. Նույն տեղում:

97. Իբն Քասիր, XI, էջ 353: